

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Պէշիկթաշլեանը գրական արժէք ունի բացառապէս որպէս բանաստեղծ. և ես նպատակ եմ գրել տալ նրա բանաստեղծական պատկերը միայն, հիմնուելով կենսական և պատմական տեղեկութիւնների վրայ:

Օգտուել եմ պ. Զոպանեանի «Պէշիկթաշլեանի կեանքն ու գործերը» արժէքաւոր գրքից, որից վերցրել եմ գլխաւորապէս պատմական և կենսագրական տեղեկութիւնները:

Յ. Յ.

1912 թ. յունուար 3.

Ս. Էջմիածին:

ԳՒՂՈՒԻ Շ

ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

I. ԿԵԱՆՔ

Մկրտիչ Պէշիկթաշլեանը ծնուել է 1828-ին, Պօլսի Օրթաքէօյ թաղի մէջ: Պէշիկթաշլեանի մայրը ծնուելուց քիչ յետոյ մեռնում է: Հայրը, հայ-կաթողիկ համայնքին պատկանող մի աղքատ ու անուս անձն, մեռել է Պէշիկթաշլեանի մանկութեան ժամանակ, երկրորդ անգամ ամուսնանալուց յետոյ: Դէպի այդ մօրուն, որ գաւակ չունենալով՝ իսկական մօր պէս սիրել ու խնամել է իրեն, Պէշիկթաշլեանը մինչև վերջն էլ մի երախտազէտ ու խանդաղատազին զգացումն է տածել, որ յատկօրէն արտայայտել է իր մի փոքրիկ քերթուածի մէջ («Ի բերանոյ մանկան առ պաշտպանուհին»), ուր նրան անուանում է «պահապան հրեշտակ», «մանկութեան հովանի» և այլն:

Պէշիկթաշլեանն ունեցել է մի անդրանիկ եղբայր և մի քոյր, որոնք երկուսն էլ թոքախտից մեռել են, — եղբայրն իրենից առաջ, քոյրը՝ յետոյ, դրանից երևում է, որ թոքախտը նրաբց ընտանիքի ժառանգական հիւանդութիւնն է եղել, որին զոհ գնաց նաև ինքը:

1839-ին նա մտնում է Մուրադ-Ռափայէլեան դպրոցը: Նրա ուսուցիչն է եղել ի միջի այլոց նաև հ. Պետրոս Մինասեանը. մի մարդ, որ ամբողջ հոգով տոգորուած է եղել հայրենի ժողովրդի մէջ գործելու և իր կարողութիւնները նրան նուիրաբերելու բուն տենչով և իր կարողութեան շափով գործադրել է այդ՝ ամէն կերպ ջանալով, որ հայերի մէջ լուսաւորութեան ձգտումն և միութիւն առաջանայ: Պէշիկթաշլեանը խորապէս ազդուել է նրանից. իր գործունէութիւնը իր ուսուցչի ձգտումների փայլուն իրականացումն է:

Պազուայի ուսումնարանից դուրս գալուց յետոյ երեք ամիս դաստիարակում է Մխիթարեանների շրջանում, որոնց ազգեցութիւնը, ինչպէս յետոյ կը տեսնենք, շատ մեծ է Պէշիկթաշլեանի վրայ:

Պէշիկթաշլեանը եղել է Իտալիայում. ծանօթ է եղել մի քանի ընտանիքների հետ. ունեցել է ինտելլիգենտ շրջան: Ներկայ է եղել հասարակական հաւաքումներին՝ միտինգներին, երեկոյթներին, թատրոններին, ուր խառական ներգաշնակ, շնորհալի, աշխոյժ հոգին իր ամբողջ փարթամութեամբ բացում է ի տես ամենեցուն: Լսել է օպերաներ, կոնցերտներ: Պէշիկթաշլեանը լաւ իմացել է լատիներէն և կարդացել է լատին լեզուով գրուած կլասիկ հրաշակերտները. այս բանը յատուկ պէտք է բնդգծել, որովհետև Պէշիկթաշլեանի ստեղծագործութեանց մէջ կլասիկական տարրը բաւական տեղ է բռնում:

Պէշիկթաշլեանն իմացել է նաև ֆրանսերէն. հաւանօրէն կարդացել է սոմանտիկ մեծ վարպետների՝ Հիւգոյի, Լամարթինի, Միւսէի, Շէնիէի երկերը: Ռոմանտիկ տարրը Պէշիկթաշլեանի մէջ ներգաշնակութեամբ միանում է կլասիկականին և գերիշխող տարր կազմում նրա ոչ-պատմա-

կան բանաստեղծութիւններէ մէջ:

50-ական թուականներին Պէշիկթաշեանը գալիս է Պոլիս, ուր մնում է մինչև իր մահը և պարապում է ուսուցչութեամբ ու Հասարակական գործերով:

Այստեղ նա սիրահարուժ է իւր աշակերտուհի օր. Վահանեանի վրայ, որը տաճկահայ արդի գրականութեան մէջ յայտնի տ. Սրբուհի Տիւսապն է: Չոպանեանի ասելով՝ Պէշիկթաշեանը իւր աշակերտուհու յարգանքն ու համակրանքը սիրոյ տեղ է ընդունում, և որ օր. Վահանեանը չի սիրել իսկապէս նրան. սակայն Պէշիկթաշեանի սիրերգները, որ նրա սիրոյ յիշատակարանն են, թոյլ չեն տալիս համոզուելու այդ բանին: Այս կէտը մնում է անորոշ: Այսպէս թէ այնպէս, Պէշիկթաշեանի յուսախարութիւնը շուտով ակնյայտնի է դառնում: Այս շատ է խոցել Պէշիկթաշեանին և աղբիւր դարձել նրա ամենախորը բանաստեղծութեանց:

Այս ախուր վիճակը շարունակուժ է մինչև մահը: 1868-ի նոյեմբերի 28-ին մեռնում է Պէշիկթաշեանը և, ինչպէս սովորութիւն է հայերիս մէջ, փառաւոր կերպով թաղուժ:

II. Բնոյրագիրը

Պէշիկթաշեանը խառնուածքով չափաւոր է. այս բանը խիստ ընթրոշիչ է նրա համար: Նա չի սիրում խիստ յուզիչ, անդնդայոյզ զգացմունքներ, խորը և փոթորկալից մտքեր: Նա թէ իւր նիստ ու կացի և թէ բանաստեղծութեան մէջ վայելչութեան, շնորհալիութեան շղթաներով շատ է կաշկանդուժ: Չունի ըմբոստ արիութիւն, հոգեկան խոր ինքնուրոյնութիւն. նրա ինքնուրոյնութիւնը ոչ թէ գրուածքի բովանդակութեան մէջ է, այլ ձևի: Չունի հոգեկան այնքան ուժեղ մեծութիւն, որ ամեն ինչ քննադատէ, վերլուժէ քանդէ և նոր ի նորոյ շինէ ինքնուրոյնարար. նա չի կարողացել դուրս գալ ժամանակակից ընդհանրութեան և մասնաւորապէս իւր նեղ շրջանի հաս-

կացողութիւնները սահմանից: Նա հեղ է, առանց քրքր-
մնջալու համակերպում է բաղդի հարուածներին և քրիս-
տոնէական խոնարհ համբերատարութեամբ, այնքան անհա-
տական դժբախտութիւններից յետոյ թողնում է կեանքը
գոհ և «անարտում», առանց գանգատուելու, նոյնիսկ
շնորհակալութեամբ:

Նրա հոգուն ներգոյակ այս կաշկանդիչ չափաւորու-
թիւնը խիստ աչքի զարնող ձևով իւր կնիքը դրել է նաև
ստեղծագործութեան վրայ: Մի ներքին անազատ տրա-
մադրութիւն կայ նրա բանաստեղծութիւնների մէջ, որը
թոյլ չի տալիս, որ բանաստեղծի զգացմունքները յոր-
ձանքով յորդանան, ծաւալուեն վայելուչ գրացիայի նեղ
ափերից դուրս և թափով խուժեն ընթերցողի հոգու մէջ:
Պէշիկթաշիեանի երկերի մէջ չկայ ուժեղ սլացք, յանկար-
ծական թռիչք, կորովի թափ: Երգերի մէջ չկայ զգացում-
ների փոթորկումն, հոգեկան պոռթկումն, որի ժամանակ
անսպասելի պատկերներ, յանկարծական գիւտեր, փրփուրի
նման կարծէք ոչնչից ստեղծուելով՝ յորդեն իրար ետևից:
Նրա ստեղծագործութիւններն աղբիւրի նման բղխում են
իր քնքոյշ, ամօթխած, համեստ և մեղմ հոգուց. Եւ այդ
նուրբ քնքշութիւնն է նրա պօէզիայի ինքնատիպ գեղեց-
կութիւնը: Նրա տաղերը յստակ և մեղմահոս վտակի են
նման, որ քնքոյշ և յուշիկ մրմնջում է մեր «սրտի ա-
կանջին»:

Այդ նրբութիւնը մի հիւանդոտ մեղկութիւն չէ, այլ
թափանցուած է կայտառ առողջութեամբ:

Պէշիկթաշիեանն ունեցել է սիրող, նուիրուող սիրտ:
Նրա զգացմունքներն ունին կրօնական երանգ. այդ կրօ-
նականութիւնը մետաֆիզիքական աշխարհայեացքի հետ ոչ
մի թելով չի կապուած. այդ՝ սոսկ զգացմունք է՝ պաշտումի
զգացմունք, որ տոն է տալիս նրա ամբողջ հոգեկան
կեանքին: Նրա հասարակական գործունէութիւնն ու կեանքը
շատ պարզօրէն ցոյց են տալիս այդ: Այդ պաշտումի զգա-
ցումից են բղխում նրա լաւատեսութիւնն ու կամքի հաս-
տատութիւնը: Իբրև ապացոյց նրա կամքի հաստատու-

թեան պէտք է ասել, որ նա անձնական ծայրայեղ թշուառութեան ժամանակ իսկ, յատկապէս սիրային կեանքի դժբախտութեան ժամանակ, նա կարողացել է իր տանջանքները ծածկել զբախ աշխարհի հայեացքից, միացել է լուռ, բայց երբէք չի մասնել իրենս:

Պէշիկիթաշեանի մասնութիւնը շատ պարզ է: Նրա թէ բարոյական, թէ քաղաքական և թէ ընդհանուր աշխարհայեացքը, և թէ աշխարհայեացք կարելի է անուանել նրա անսխառեմ համոզումները, հիմնուած են նրա զգացմունքի վրայ, իսկ տիրող զգացումը, ինչպէս ասացինք քիչ վերեւ, պաշտաման՝ կրօնական զգացմունքն է: Նրա աշխարհայեացքը սրտի աշխարհայեացք է և սրտին էլ բաւարարութիւն է տալիս: Նա, կարելի է ասել, պաշտում է և՛ հայրենիքը, և՛ բնութիւնը, և՛ կոյսը:

Պէշիկիթաշեանի հոգու ընդհանուր խարակտերը յունական է: Գեղեցիկը բաւական խոշոր ակզ ունի նրա հոգեկան օրգանիզմի մէջ: Հայրենիքի, բնութեան և կոյսի պաշտաման մէջ մի ընդհանուր գիծ կայ, այդ գեղեցկի պաշտամունքն է:

Պէշիկիթաշեանը չի եղել փառասէր, շահախնդիր: Յանձնապաստանութիւնը, քէնը, նախանձը, ցուցամուլութիւնը խորթ են եղել նրա հոգուն:

Նրա հոգու գլխաւոր բովանդակութիւնն են եղել՝ սէր առ հայրենիք, առ բնութիւն և առ կոյս: Դրանք էլ կազմում են նրա բանաստեղծութեանց գլխաւոր նիւթը, և արժէք ունին յատկապէս հայրենիքի, սիրոյ և բնութեան երգերը, որովհետև զբանց մէջ բանաստեղծի հոգին է, որ բացւում է մեր առաջ:

Անցնենք զբանց վերլուծութեանը:

(Նարունակիլի)

Ե. Ե.